



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ԼԱՆՋԱԶԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արարատի մարզ գ. Լանջազատ /Զովաշեն/

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 2 -Ն

03.04.2012թ.

/ավագանու հերթական համար/ օրակարգի հարցի համարը/

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԼԱՆՋԱԶԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2012թ. ԲՅՈՒՋԵԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով Լանջազատ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Լանջազատ համայնքի 2012թ. բյուջեի հետևյալ փոփոխությունները.


Վարչական բյուջեից ֆոնդային բյուջե տարեսկզբին նախատեսված հատկացումը՝ 1050.0 հազ. դրամ գումարը ելնելով անհրաժեշտությունից ուղղել վարչական բյուջեին:

1. 04.05.01.56 «Կամրջային կառուցվածքների վերականգնում և պահպանում» ծրագրի 4251 - «Շենք և շինությունների ընթացիկ նորոգում» հոդվածն ավելացնել 1050.0 հազ.դրամ:
 2. 10.07.01.54 «Սոց. անապահով անձանց աջակցություն» ծրագրի 4729 - «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածը պակասեցնել - 350.0 հազ. դրամով ելնելով անհրաժեշտությունից պակասեցումը կատարել 2012թ. 4-րդ եռամսյակի մեջ:
 3. 11.01.02.51 «Վարչական բյուջեի պահուստային ֆոնդ» ծրագրի 4891 - «Պահուստային միջոցներ» հոդվածը պակասեցնել - 150.0 հազ. դրամով:
- Ֆոնդային բյուջեի ծախսային մասում կատարել հետևյալ փոփոխությունները՝
- 4 04.05.01.56 «Կամրջային կառուցվածքների վերականգնում և պահպանում» ծրագրի 5116 «Շենքերի և շինությունների կառուցում» հոդվածը պակասեցնել -2528.7 հազ. դր. 5117 «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» հոդվածն ավելացնել - 990.0 հազ. դրամով
 5. 06.04.01.52 «Արտաքին լուսավորության ցանցի շահագործում և պահպանում» ծրագրի 5112 «Շենքերի և շինությունների կառուցում» հոդվածն ավելացնել - 463.7 հազ. դր. 5134 «Նախագծահետազոտական ծախսեր» հոդվածն ավելացնել - 25.0 հազ. դրամով,

որից հետո Լանջազատ համայնքի 2012 թ. բյուջեի եկամտային և ծախսային
մասերը կկազմեն՝ 23699.5 հազ. դրամ:

Ավագանու անդամներ՝ /ստորագրություններ՝ կողմ, դեմ, ձեռնպահ, նշելով բոլորի անուն, ազգանունները, ներառյալ բացակաները/

1. Գ. Հարությունյան *[Handwritten Signature]* Կողմ
2. Ս. Սարգսյան *[Handwritten Signature]* Կողմ
3. Հ. Հովհաննիսյան *[Handwritten Signature]* Կողմ
4. Ս. Բաբախանյան *[Handwritten Signature]* Կողմ
5. Խ. Իսախրյան *[Handwritten Signature]* Կողմ
6. Ս. Բաբաջանյան *[Handwritten Signature]* Կողմ
7. Հ. Հակոբջանյան *[Handwritten Signature]* Կողմ



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ

[Handwritten Signature]

Հրայր Հակոբջանյան